

Այլ թէ Պլայշմառք ըսված տեղն է, մէկալը դրսեցիներուն, որ Հաֆնէ ոչ թայկէ ըսված տեղն է: Սատուռ մըն ալ Սոսկոֆները ունին, որ մեծ Շուլէ ոչ թուասսէ ըսված ճամբան է: Եւ տերականները երկու աղօթք ընելու տեղ ունին, ու հրէաները մէկ Սինակոկայ: Եւ սոնք ամէնն ալ իրենց զատ զատ դպրատունները ունին, ու իրենց տղաքը իրենց աղանդին ուսումներուն մէջը կը կրթեն, ու լեզուներ ու գիտութիւններ կը սորվեցընեն:

ԳՒՈՒԽ Օ:

Քաղաքին արդարեանները իմ հանգրձանները (գաւառները):

1. Ինչպէս վերը յիշեցինք՝ հանգրձանները դրսի դիէն հաստը պատով ու խորունկ փոսով քոցած են, ու դուրս ելլալու ու ներս մտնելու համար 11 մեծ դռներ կան, ամէն մէկուն քովը կառավարութեան զինւորներ կը սպասեն, ու գիշերը կը քոցեն, բայց դուրս ելլալ ու զօղներուն կը բանան, թող կուտան, դրսէն եկողներուն՝ թէ որ բեռ չունին նէ՛ կը բանան՝ ներս թող կուտան, բեռ ունեցողներուն քովը զինւոր կը դնեն մաքսատունը կը խրկեն:

2. Հանգրձանները 34 հատ են, որ քաղաքը ամէն դիէն պսակի պէս կը պատեն: Եւ սոնց ամէնուն մէջը 1766ին 3190 տուն կար, հիմայ 6380 տուն

եղած են, ու ամէն մէկը արևելեան տներուն ու թին տասնին չափ կան, ու աս մօտիկները ժողովուրդը անանկ շէնքի ետևէ է, որ մէկ տարւան մէջը նորէն վաթսուն տուն շինած են որոնց ամէն մէկը մէյմէկ պալատի պէս է, ու օր քան զօր շինելու բաղձանքնին կեւելնայ կոր:

3. Հանգրվաններու մէջը 23 ժողովրդապետական ժամ, 8 կրօնաւորներու՝ ու 2 կուսանքնորու ժամ ու վանք կան, շատ երևելի պալատներ՝ մեծ մեծ տներ ու պարտէզներ կան, որ տեսնողներուն սիրտը կը գողնան՝ իրենց նայիլ կուտան:

4. Բոլոր հանգրվանները ու թը բաժնւրված են, ու ամէն մէկը մէյմէկ կառավարութե տակն են, որոնք Փօլէպայ կըսվին: Ասոնք ժողովրդեան հանգըստութենը համար գիշեր ցորեկ կը հսկեն, ինչ որ կըլլայ՝ կիմանան, յանցաւորները կը գտնեն, պղտիկ բաները իրենք կը պատժեն, մեծերը քաղքի կառավարութեան կուտան: Ասոնց մէջը Լօզէֆը թաթ, Փլացէլ (որուն մէջը մեր վանքն է), Սէնինկէռկասսէ, Լլսէռկասսէ, Լանտշթռասսէ, Սիտին, Սարիաշիլֆ, ու Եթթէնֆէլտըսված հանգրվաններուն օդը ամէնէն առողջ է, ու իրենք ամէնէն գեղեցիկ են: